

աւթագ - 520. 10. 1




ՆՈՐԱՅԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՆԴԵՍ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԻՐԿՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 10

24 ԱՊՐԷԼ 1290



ԿՆ 100 ՓՐ. Արտաւազդ Վ. Գալէնտէրեան

Նաւարդ Վ. Սահակեան



Յմբատ Եպս. Սահակեան

Մկրտիչ Վ. Չղատեան

Սահակ Վ. Շատապաշեան

ՄԵՇ ԵՂԵՌՆԻՆ ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԶՈՂԵՐԷՆ, ՄԵՇ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԷՆ

ԱՊՐԷԼ 10Ի ՍԳԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻԻ

Թիւ 19 բառեղծուածին լուծումը

Ք ո ղ
Ր ո ք
Ի ղ ծ
Ս ու ր
Տ ա ճ ա ր
Ու ր ք ա թ
Ս ա տ ա ն ա Յ
մ ա ն ա ն Ա
Ա ք գ ա Ր
Թ ա կ ր Ե
Ա ք ա ր Ա
հ ա մ ք ա Ի
Մ ու մ Ե ն Ի
Ե ր ա խ ա յ
Ռ ա հ ա ն
Ե դ Ե մ
Լ ի ճ
Ո ր ք
Յ Ե դ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵՍԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

Թիւ 20 բառեղծուածին լուծումը

ա Ս ա
Լ ո Ֆ Ո տ է ն
Լ Ե Ի ո ն
ք ու ր վ ա ու
ճ ա Բ ո ն
մ ա Մ ա ց
ս Ե Լ
Ե ք ու Ս ա դ է մ
Ե փ Ր ա տ
ա ն Ու 2
տ ա Պ ա ր
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Թիւ 21 բառեղծուածին լուծումն է
ԱՆՀԱՄԲԵՐ, Թիւ 22 հանելուկինը՝
ՄԵՌԵԼ ԵՒ ԶՈՐՍ ԴԱԴԱՂԱԿԻՐՆԵՐ, Թիւ
23 հանելուկինը՝ ԶՐՀՈՐ:

ԼՈՒԾԵՅԻՆ

Անգլիական (Միս Պրճիս) վարժարա-
նէն (Գում Գարու). — Հերմինէ Ասլան-
եան, Նուարդ Զարպիանէլեան 19, 20 եւ
21 բառեղծուածները եւ 22, 23 հանե-
լուկները. Մ. Պճիկեան 19 եւ 21ը. Ա-
րուսեակ Գուրպէթեան 14, 16 եւ 18ը.
Ովսաննա Բասկալեան 22 եւ 23ը:

Մայր վարժարանէն (Գումգարու). —
Փեփրոնէ Պէսիմեան, Անահիտ Մէհտէր-
եան 19, 20, 21, 22 եւ 28ը: Պէսիմեան
լուծած է նաեւ Տրդ թիւին 14, 15, 16ը:

Հայ Աւետարանական վրժ.էն (Խաս-
գիւղ). — Հերմինէ Տէօվլէթեան, Անժէլ
Զորեպանեան, Հերմինէ Պարտիզպան-
եան, Մելինէ Էկինեան, Ազատուհի Բա-

րունակեան, Արաքսի Պէրպէրեան, Ան-
նիկ Պէրպէրեան, Էօժէնի Կիւմէզեան,
Գ. Օկըրեան, Գ. Լօքմակէօզեան, Նու-
պար Շամլեան Տրդ թիւին 14, 15, 16
17 եւ 18ը:

Ս. Մեսրոպեան վրժ.էն (Կէտիկ Փա-
շա). — Սուրէն եւ Մաքրուհի Տէր Գրի-
գորեան, Հ. Սարաֆեան, Շ. Կիւմիւշ-
կէրտանեան, Լ. Մեսրոպեան, Ս. Նա-
ւարեան, Արմենուհի Շատուորեան, Վ.
Յովնանեան 19, 20, 21, 22 եւ 23ը. Գ.
Սէթեան 19, 20, 21 եւ 22ը. Թագուհի
Իպրանեան, Արաքսի Յակոբեան, Յ. Սա-
մուէլեան, Արուսեակ Պէրպէրեան, Հեղթ-
նէ Թօքաթլեան, Բերուզ Պէրպէրեան, Մ.
Եօթնեղբայրեան, Մ. Աւետեան, Հ. Սա-
րաֆեան, Ա. Մեսրոպեան, Մ. եւ Հ.
Խրիստիանեան 21, 22 եւ 23ը. Յ. Ազին-
եան 19 եւ 20ը. Ժիրայր Սիմօնեան, Ե-
Տիրատուրեան, Իզաբեթ Պասմաճեան,
Եսթեր Զուրբեան 23ը. Գ. Պէրպէրեան,
Դոհարիկ Սարրեան 22 եւ 23ը. Հ. Գա-
սապեան 22ը. Նէվրիկ Սիմօնեան 14ը:

Թորոսեան վրժ.էն (Մօտա). — Յ.
Թագըճեան, 19, 20 եւ 23ը. Ն. Գրիգոր-
եան, 19, 20, 21 եւ 23ը:

Լեւոնեան եւ Վարդուհեան վրժ.էն
(Թօփգարու). — Խ. Փիշտօֆճեան 14, 15,
16, 17 եւ 18ը:

Ամերիկեան վրժ.էն (Կէտիկ Փաշա).
— Ա. Տիմիճեան, Վ. Փափագեան, Զ.
Ալիքսանեան, Պ. Սինէմեան, Արուսեակ
Գուրպէթեան 19, 20, 21, 22 եւ 23ը.
Պայթու Համբարեան 21, 22 եւ 23ը. Վ.
Տիմիճեան 14, 15, 16, 17 եւ 18ը:

Պէգազեան վրժ.էն (Մագրիգիւղ). —
Ա. Մուրատեան, Վ. Մինասեան, Ե. Փա-
փագեան 19, 20, 21, 22 եւ 23ը. Յ.
Մինթանճեան 20, 22 եւ 23ը:

Նոր Դպրոցէն (Նշան Թաշ). — Բ.
Սամուէլեան 19 եւ 20ը:

Եսայեան վրժ.էն (Բերա). — Յակոբ
Զէօմէքճեան 19, 20, 21, 22 եւ 23ը:

Լուծեցին նաեւ՝ Պ. Զարոյեան, Երա-
նուհի Սուրեան, Մ. Պէգճեան 19, 20,
21, 22 եւ 23ը. Մ. Փաշալեան 14, 15,
16, 17 եւ 18ը. Բ. Հայկագեան 19ը:


ՎԻՃԱԿՈՎ ՇԱՀՈՂԸ

19, 20 եւ 21 բառեղծուածները, 22
եւ 23 հանելուկները միանգամայն լու-
ծող 22 աշակերտներէն ու աշակերտու-
հիներէն վիճակով առաջնութիւն շահե-
ցաւ Պր. Արշակ Տիմիճեան, որուն կը
նուիրենք «Զարհուրանքը Կարնոյ» մէջ
անուն, ազգային կեանքէ վէպը:



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿ. ՀԱՆԴԵՍ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



ՏԵՐԵԼ ԵՒ ՏՏՈՐԷՆ
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 10

24 ԱՊՐԻԼ 1920

ԲՆՈՒԹԵԱՆ ՍԷՐԸ

Փոքրիկ բարեկամներս,

Այս անգամ Ձեզ հաղորդելու բարի լուր մը ունիմ։ Գիտե՞ք թե ի՞նչ է այդ։ Ըսեմ ձեզ։ Որոշուած է որ, եթէ կարելի ըլլայ, ամէն շաբաթ խօսիմ ձեզի։ Ձեր սիրական «Առաւօտ» հանդէսը պիտի ջանանք իբրեւ շաբաթաթերթ ամէն շաբթու հրատարակել։ Կարգադրութիւն մը որ կը յուսանք թէ շատ օգտակար ու նոյն առեւն փափաքելի պիտի ըլլայ ձեզի համար։ Հետեւաբար ամէն շաբաթ երջանիկ առիթը պիտի ունենամ ձեզ խօսելու մեզ շահագրգռող հաճելի ու շինիչ նիւթերու և հարցերու մասին։

Այսօր ձեզ պիտի խօսիմ Բնութեան սիրոյն վրայ, այսինքն այն սիրոյն զոր կը զգանք Բնութեան տեսարաններուն, երեւոյթներու հանդէպ և անոնց մեզ առթած հաճոյքներուն ու երջանկութեան համար։ Ամէնգ ալ սորված էք որ մարդս իր ֆիզիքական կեանքէն զատ ունի նաեւ հոգեկան ու մտաւոր կեանք մը. մեր զգացումները, մտածումները, փափաքները, հոգ չէ թէ չկարենաք բացատրել անոնց ինչութիւնը՝ հասկնալի են ձեզ։ Բայց նոյն առեւն գիտե՞ք նաեւ որ մեր այդ աննիւթական հոգիէն ու զգացումէն զատ ունինք նաեւ նիւթական մարմին մը, զարմանալի գործարանաւորութեամբ։

Կարծեմ այս ըսածներուս մէջ ձեզի անհասկնալի բան մը չկայ։ Ձեր ծնողքին համար սէր և յարգանք ունիք. ձեր մէկ ընկերը ձեզի համար շատ համակրելի է. թուարանական խնդիր մը կը լուծէք. դիտական ծանօթութիւն մը կ'ըմբռնէք. այս բոլորին մէջ ոչինչ կայ նիւթական։


Նոյն ատեն կը սնանիք նիւթական միջոցներով, կը հագուիք, կը պաշտպանուիք, ձեր ֆիզիքական կեանքը սերտօրէն կապուած է նիւթի ու նիւթական բաներու հետ: Ուրեմն կը տեսնէք թէ մարդ գլխաւորաբար երկու կեանք ունի, մէկը՝ իր հոգեկան կեանքը, իսկ միւսը՝ իր նիւթական կամ ֆիզիքական կեանքը:

Եւ ինչու համար այս երկար ու քիչ մըն ալ վերացական բացատրութիւնը: Անոր համար որ մենք Բնութեան հանդէպ մեր սիրոյն մէջ մեր այս երկու կեանքով ալ ազդեցութիւններ կ'ընդունինք: Այդ սէրէն թէ տեսական թէ գործնական օգտակարութիւններ կը քաղենք:

Մեր ստացած տպաւորութիւններուն կամ ազդեցութիւններուն աղբիւրը մեզմէ դուրս Բնութիւնը և մարդիկ են, իսկ մեզմէ ներս՝ մենք, մեր ներքին խորհուրդներն ու զգացումներն են: Հիմա մեր ներքին տպաւորութիւնները թողելով, քիչ մը խօսինք տպաւորութեան կամ ազդեցութեան արտաքին աղբիւրներէն Բնութեան մասին:

Որովհետեւ մենք ֆիզիքական կեանք մը ունինք՝ նիւթին ու նիւթական երեւոյթներու ազդեցութեան ենթակայ ենք: Գարնան մէջ ենք. առտու մը դուրս ելէք ձեր տուններէն, հեռացէք քաղաքին բազմամբոխ փողոցներէն դէպի բացօդեայ դաշտեր և պարտէզներ, դէպի լեռներ ու անտառներ, Բնութեան ազատ ծոցին մէջ պահ մը կազդոյր մը զգալու համար և մօտէն ենթարկուելու համար այն հաճելի ազդեցութեանց, որոնց մէկ ձօխ դանձարանն է Մայր Բնութիւնը: Եւ որովհետեւ մեր հոգեկան ու ֆիզիքական կեանքին մէջ այդ ազդեցութիւն-թիւններուն հետ ներդաշնակուելու, անոնցմով շփման մէջ գալու յարմարութիւններ կան, մենք կը սիրենք Բնութիւնը և անոր տեսարաններն ու երեւոյթները: Գեղեցիկ ծաղիկ մը, զոր օրինակ, իր անուշ բոյրով կը պարարէ մեր ունեզերը, իր գունազեղ ու սիրուն տեսքով կը հրապուրէ մեր նայուածքը ու հոգեկան հրճուանք կը պատճառէ մեզ: Գաղցրերգակ թռչուն մը իր ճառագողիւնով հաճեցնելով մեր լսելիքը քաղցր զգացումներով կը համակէ մեր հոգիները: Ծագող արեւը, իր ոսկի ճառագայթներով ու իրիկնամուտի վարդ երանգները իրենց դիւթութիւններով, ծովը իր այլազան տեսարաններով, լեռները իրենց պէսպիսուն պատկերներով, վերջապէս Մայր-Բնութիւնը իր բիւրազան հրապուրներով կը հմայէ մեզ ու մեր սիրտերուն մէջ կ'արթնցնէ սէր մը, զոր կը կոչենք Բնութեան սէրը: Եւ, ինչպէս ըսի, այս սէրը անոր համար կը զգանք, քանի որ նախ՝ Բնութիւնը ունի տպաւորութիւններ, և երկրորդ մենք ալ յարմարութիւններ ունինք անոնցմէ ազդուելու: Բնութիւնը աղբիւրն է հաճելի ազդեցութիւններու ու մենք ալ ունինք ընդունակութիւնը անոնցմէ հաճոյք զգալու, ահա ասկէ յառաջ կուգայ Բնութեան Սերը:

Ուրիշ առթիւ կը խօսիմ ձեզի Բնութեան Սիրոյն օգուտներուն մասին:



ԹՈՉՈՒՆԻՆ ԲՈՅՆԸ

Ճամբունս վրայ հովանուս՝
Երկու թուխ գոյն թռչնիկներ
Սիրուն բունիկ մ'են շիներ,
Կ'երգեն սիրոյ երգ մ'անփոյթ.
Կ'երթան, կուգան օրն ի բուն
Թռիչֆով արագ ու անթիւ,
Երգելով ֆաղցր ու խնդուն
Հրնիւ, նիւ, նիւ, հրնիւ, նիւ:

Փայլուն, գունեղ ունին վիզ,
Կեանֆոս գոհար՝ աշուկնին,
Բոլոր օրը կէ հգնին
Հաւաքել յարդ, ցօղուն, ծիւղ,
Ծըլաւ, փետուր ու շիւղեր.
Մոռնան ունեյն իսկ հեշիւ,
Բայց երգերնին չեն ձրգեր
Հրնիւ, նիւ, նիւ, հրնիւ, նիւ:

Դուռիս առջեւ կը նետեմ
Փշրանֆ, քելեր ու դերձան,
Անոնֆ անվախ երբ մօտ գան՝
Կըսցելնին ես կը դիտեմ.

Կը նրռուողեն, կը թռչին,
Թառին պանիկ մը հազիւ,
Բայց միշտ կ'երգեն երգերնին
Հրնիւ, նիւ, նիւ, հրնիւ, նիւ:

Ինչ հոգ մըռայլն ամպերու,
Ինչ հոգ իջնէ երբ անձրեւ,
Անոնց փետուրն է իբրեւ
Անջրանցիկ վերարկու.
Անոնֆ երբեք չեն տխրիր՝
Տափին, բուֆին, ցայգ ու տիւ
Կ'երգեն աշխոյժ, բերկրալիւ
Հրնիւ, նիւ, նիւ, հրնիւ, նիւ:

Դուք զըւարթ, ժիր ու ֆնֆուշ,
Սիրուն, թուխ գոյն թռչնիկներ,
Դիւթանֆն ըսեք ինծի ձեր՝
Այդ բառերուն փափկանուշ,
Զորոնֆ ամեն ժամանակ
Կրկնէք թափով մ'անհաշիւ
Կրկին, կրկին, շարունակ
Հրնիւ, նիւ, նիւ, հրնիւ, նիւ:

Անգլ.է ԳԲ. Հ. Գ.



ՓՈԲՐԻԿ ՆՐԵՇՏԱԿԸ

Յո մը հրեշտակ մ'եկաւ մեր տուն,
Սիրուն, փոքրիկ մէկ հրեշտակ,
Քովը գացի հարցնել շիտակ.
«Չըսե՞ս, հրեշտակ, ֆուկին անունն:»

Ան չի տըւաւ ինձ պատասխան.
Լոկ ժպտեցաւ անուշ ժպտով.
Ըսի. «Կ'ուզե՞ս, կենամ ֆու ֆով,
Դիտեմ, արդէն մերն ես միայն:»

Elizabeth Prentiss

Մայրիկս ըսաւ. «Հրեշտակ սիրուն,
Հոսկէ մ'երթար, մեր ֆով կեցիր,
Պիտի սիրենֆ ֆեզ անձանձիր,
Ռհ, մի թողուր երբեք մեր տուն:»

Ան շատ կեցաւ մեզ մօտ՝ սակայն.
Զինֆ կը սիրենֆ սիրով մ'անհուն.
«Լըսել կ'ուզե՞ք անոր անուն.
Էհ, ըսեմ ձեզ. — Եղբայրս է ան:»

ԳԲ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Գ Ո Վ Ե Լ Ի ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԸ

Հիմա ձեզի պիտի պատմեմ
գովելի քաջագործութիւնը պա-
տանի մը, որ մեծ արթնամտու-
թեամբ մը յաջողեցաւ փրկելու
երեք կեանքեր: Ու այս պատմու-
թիւնը ձեզի պատմելով նպատակս
ձեզի որչափ դբօցնել՝ նոյնչափ
եւս հրահանգել է, որ դուք ալ
ըլլաք արթնամիտ, արագ ու քա-
ջասիրտ. յատկութիւններ, որոնց-
մով պէտք է օժտուած ըլլայ իւ-
րաքանչիւր պատանի:

1882 տարուան Յունւարի վեր-
ջին օրը Նիւ Եօքքի մեծ փողոց-
ներէն մէկուն անկիւնը գտնուող
շէնքէ մը հրդեհ ծագեցաւ: Այդ
շէնքին գետնայարկը միթերանոց-
ներ ու վերի յարկերն ալ շատ մը
գրասենեակներ կային:

Այս խոշոր շէնքին մէջ դրժ-
բախտաբար մէկ սանդուխ կար,
ու այդ ալ փայտէ շինուած էր:
Արդէն այս հսկայ շէնքին մէկ
մեծ մասն ալ փայտաշէն էր, ու
շատ ալ չորցած, այնպէս որ
Յունւարի այդ օրը երբ կրակը
յանկարծ սկսաւ բռնոր, շէնքը մէ-
կէն բռնկիլ սկսաւ և մէջը դրտ-
նուող մարդերէն շատեր յանկարծ
բոցերով պաշարուեցան ու այրե-
ցան:

Այո՛, շատ մը կեանքեր կոր-
սուեցան այդ սոսկալի օրը, բացի
այն երեք կեանքերէն, որոնք ա-
զատուեցան շնորհիւ արթնամտու-
թեան ու ճշդապահ քաջագոր-
ծութեան պատանիի մը: Եւ ահա
այդ պատանիին ու անոր ըրած

այդ գովելի քաջագործութեան
մասին պիտի պատմեմ ձեզ:

Երբ հակառակ հրշէջներու ա-
մէն ջանքերուն, շէնքը բոցերով
պաշարուած էր, ու մուխով ալ
շրջապատուած, այնպէս որ ամէն
մարդ կը կարծէր թէ անոր մէջ
ալ մարդկային ո՛չ մէկ էակ մնա-
ցած կրնար ըլլալ, շէնքին վերի
յարկը, անկիւնի պատուհաննե-
րուն առջեւ երեք դժբախտներ
իրենց ձեռքերը դուրս կ'երկն-
ցնէին օդնութեան համար:

Այդ բարձր տեղէն վար սա-
լայատակին վրայ ցատկելը հա-
րաշար մահ կը նշանակէր: Ետ
երթայն ալ անկարելի էր: Արդէն
մուխը, ջերմութիւնն ու բոցերը
այնչափ մօտեցած էին, որ դէմ-
քերնին յուսահատական սարսա-
փով մը պատած էր, ի՞նչ կարելի
էր ընել:

Հրշէջները շուտով ելնարան-
ներ բերին, բայց շատ կարճ եկան
անոնք: Ամէնէն երկայն ելնարանն
իսկ հազիւ մինչեւ պատուհանը
բարձրութեան կէսը կը հասնէր:
Վերջապէս այնպէս կարծուեցաւ
թէ բան մը ընել կարելի չէր:
Կարծես այս խեղճ մարդիկը դա-
տապարտուած ըլլային անպատ-
ճառ կորսուելու:

Բայց հոն հաւաքուած ու սոս-
կումով եւ գութով համակուած
բազմութեան մէջ, որ այս աղէտը
կը դիտէր, կար խափշիկ պատա-
նի մը, կօշիկ ներկող մը: Ահա
այս պատանին էր որ յղացաւ
յաջող գաղափար մը, զոր անմի-
ջապէս գործադրեց և աղատեց
այս երեք կեանքերը սոսկալի մա-
հէ մը:

Վեր, դէպի պատուհանը նա-
յելով՝ Չարլի Բայթ, — որով-
հետեւ ա՛յս էր պատանիին ա-
նունը — տեսաւ բան մը որ զին-
քը մտածելու մղեց: Ուրիշներ ալ
կը նայէին, բայց ո՛չ ոք խորհած
էր այս: Չարլի տեսաւ որ այդ
դժբախտ մարդոց կեցած պատու-
հանին վրան, տանիքէն, թելերէ
շինուած պարան մը հաստատուած
էր ու փողոցին դիմացի կողմի
հեռագրական մէկ ձողին կատարը
կապած էր: Նոյն ատեն նկատեց
թէ երբ այս պարանը հեռագրա-
կան ձողին կատարէն փրցուէր՝
ճիշդ պատուհանին առջեւէն վար
պիտի կախուէր, այնպէս որ այդ
երեք դժբախտները կրնային այդ
պարանին վրայէն դիւրաւ վար՝
փողոցը իջնել: Ահա այս էր Չար-
լի յղացած խորհուրդը:

Կորսնցնելու ժամանակ չկար:
Ան՝ վայրկեանի մը մէջ հրշէջի
մը ձող մագլցելու գործիքը, որ
գետինը ձգուած էր, առաւ և
սկսաւ ողորկ ձողէն վեր մագլը-
ցիլ: Այդ հովոտ ու ձիւնոտ օդին
ատ դիւրին գործ մը չէր. բայց ա-
րագ և տաժանելի մագլցումով մը
Չարլի փութով վերը հորիզոնա-
կան ձողերուն հասաւ ու քիչ մը
եւս ջանալով մինչև կատարը ե-
լաւ:

Վայրկեանի մը մէջ ձողին կա-
տարէն փրցուց պարանը, որ
դիմացի այրող շէնքին տանիքէն
վար, պատուհանին առջեւը կախ-
ուեցաւ: Մինչ երեք դժբախտ
արկածեալները իրարու ետեւէ
պարանէն վար սահելով գետին
կ'իջնէին՝ բազմութիւնը ուրախու-
թեան աղաղակ մը բարձրացուց:

Վայրկեանի մը համար այս
քաջ պատանին, որ զանոնք ա-
զատած էր, գրեթէ մոռցուած էր.
բայց հազիւ վայրկեան մը: Ան-
միջապէս ամէն ոք յիշեց Չարլի
Բայթի արթնամտութիւնը, արագ
գործին ու յաջող հնարքին մասին
այդ պէտքի ժամուն:

Այս քաջ պատանիին քաջա-
գործութեան պատուանշան մը
տալ որոշուեցաւ Ամերիկեան Բա-
րեսիրական Ընկերակցութեան
կողմէն: Ամէն կողմեր, մինչեւ
խակ ծովերէն անդին, տարածուե-
ցաւ անոր քաջագործութեան ու
հնարամտութեան համբաւը և ա-
մէն ոք գովեցին զայն: Անդլիայէ
ալ, Լոնտոնի Բարեսիրական Ըն-
կերակցութենէն ղրկուեցաւ ոսկի
մէտալ մը, որուն վրայ կար հե-
տեւեալ արձանագրութիւնը. —
«Նուիրուած Չարլի Բայթի, որ ե-
րեք կեսնիք ազատեց 31 Յնվր.
1882ին:»

Պատիւ քաջ Չարլի Բայթին:
Անգլ. Ե ԳՐԻՉ-ԲՆԱՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏԲԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստական
ամենանուրբ նաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն:

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԵՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փա-
շայի զին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վէր-
քեր եւ ախտեր: Կը գտնուի ամէն օր
բացի Կիրակիէ, Գարաքէօյ, Ազլ. Փօս-
թին դեմաց Հին Վոյվօտայ թիւ 3

ԱՌԱԿԱՆԻ

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Գեշն ամսյ օրը
Շատ է տեսեր.
Գեշն լաւ բան
Մի՛ սպասեր:



Գառը՝ գարնան,
Զիւնը՝ ձմեռան,
Ասեցն ունի
Ամեն մէկ բան:



Գեշին քուփալ՝ գինի էր,
Կլեց՝ լեղի էր.
Ուրիշին լաւ ըսածդ՝
Դուն քեզ չե՞ս ուզեր:



Այո՛, գայլի տուն
Զի կեանք ոսկոր,
Ու քաղցած մարդուն
Քով՝ հացի չիք տր:



Գոց ձեռքով հանն
Զի բռնուիր.
Գոց բերնով կանչ
Բնա՛ւ չի լսուիր:



Դրսէն քահանայ,
Ներսէն սասանայ.
Կեղծաւոր մարդուն
Զըլլայ խաբուիս դուն:



Դուրս էլալ կատուն՝
Մուկը մքսալ տուն.
Պատիժն հեռացա՛ւ,
Պատրաստ՝ գլխուդ ցաւ:



Դուն քուն,
Բախտդ արթուն.
Նրջանիկ
Այն մարդուն:

ԱՌԱԿԱՆՈՍ

ԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՕՐՕՐՈՑԸ ԿԱՄ ՁՈՒՆ

Ժ.

Ի՞նչ է մահը. — Չորցած տերեւին ձե-
ւափոխութիւնը Բնութեան մէջ. — Մե-
ռած թռչունը եւ անոր ձեւափոխուած
իւրջերը. — Բնութեան մէջ մահ չկայ,
այլ ձեւափոխում. — Ոչինչ կը կորսուի.
— Անմահ հոգին ի՞նչ փառք կը հագնի
վերջապէս.



Ի՞նչ ըսել կ'ուզենք մեռնիլ
ըսելով. ի՞նչ է այս մահ կոչուա-
ծը: Ի՞նչ կ'ըլլայ մարմինին երբ
թաղուի, ծաղիկին՝ երբ թոռմի,
տունկին՝ երբ կը դադրի ալ ապ-
րելէ: Աշնան ատեն մտէք անտառ
մը, հոն կոխատելու համար չոր-
ցած տերեւներ, դորոնք կը կոչենք
մեռած տերեւներ: Ո՛ւր կ'երթան
անոնք տարի մը ետքը: Անոնք
յաջորդ տարին տարբեր ձեւով ի-
րենց հին ոստերուն վրան են,
սալորենիին վրայ ծաղիկներ եղած
են, վայրի աղաւնիին սիրտին
մէջ կը թրթռան կամ երկինքը
կ'երանգաւորեն վերջալուծային
երանգներով:

Երբ տերեւ մը իյնայ, մենք
այդ դժբախտութիւն մը կը կար-
ծենք. այդ մահ մը չէ, այլ գե-
ղեցիկ կեանքէ մը ուրիշ գեղեց-
կագոյն կեանք մը անցնիլ է:
Բնածուխը, ջրածինը, թթուա-
ծինը, բորակածինը եւ այն միւս
տարրերը, որ բոյսի մը նախա-
հիւթին մէջ կաշկանդուած էին՝
կը տարրալուծուին շինելու հա-
մար ուրիշ բաղադրութիւններ:
Մեր տերեւը հիմա ջուր, անու-

չաղբ, կիրի տարբեր բաղադրու-
թիւններ, տարբեր թթուներ, և
այլն տարբեր եղած է: Մեր տե-
րեւը այս կերպով հանքային նիւ-
թերու վերածուած կ'ըլլայ: Անոր
տարբերէն ոմանք բուսական, ու-
րիշներ կենդանական կեանքերու
մէջ կը մտնեն:

Ահա այս կերպով այդ աշնա-
նահար տերեւը բխրաւոր ձեւա-
փոխութիւններու կ'ենթարկուի.
անուշադրը և մոխիրը գետինէն
ծծուելով վարի արմատիկներու
միջոցով ծառին յաջորդ տարուան
տերեւներուն կ'անցնին: Անկէ
բաժին ունին որթատունկը իր
դալարագեղ տերեւներուն համար.
թռչունները, միջատները եւս ան-
մասն չեն անկէ. իրիկնամուտի
նուրը երանգներով երկինքը զար-
դարող ամպերն իսկ բաժին ու-
նին անոր մէջ:

Սակայն մարդիկ նորէն ալ
մեզա՛ծ տերեւներ կը կոչեն զա-
նոնք, որովհետեւ անոնք իրենց
այդ չորցած ձեւէն ելած են՝ խառ-
նուելու համար տիեզերքի մէջ:

Թռչունն ալ այսպէս է: Օր
մը ան ալ կը պառկի ու ա՛լ չար-
թնար. մարդիկ զայն մեռած կը
կոչեն: Անոր անհամար խորշերը
որ ներդաշնակ ամբողջ մը կը
կազմէին, ա՛լ ազատ են կեանքի
ուրիշ ձեւեր որոնելու: Մեռած
տերեւին խորշերուն նման՝ մեռած
թռչունին խորշերն ալ կը լուծ-
ուին, զիրենք բաղադրող տար-
րերը կ'ազատագրեն, որոնք կ'եր-
թան հաճելի միացումներով կազ-
մելու նոր կեանքեր. թռչունը
հիմա գեղեցիկ ծաղիկի մը փոխ-
ուած է. անոր նախահիւթը ձե-

ւացնող բնածուխի, ջրածինի,
թթուածինի, բորակածինի ու ծը-
ծումբի նոյն հիւլէները կը միա-
նան բոյսի մը նախահիւթով: Գե-
ղեցիկ թռչունին մարմինին իւ-
րաքանչիւր հիւլէն Բնութեան
մէջ տեղ մը գործի վրայ է, որ
կ'օգնէ ծաղիկներուն ծաղկելուն,
թռչուններուն երգելուն, մեղու-
ներուն մեղր շինելուն, եղջերուին
ցատկելուն և մկնիկին պահուը-
տելուն:

Ու այսպէս կը անսնենք թէ
մարմին մը երբ կը մեռնի՝ չի
կորսուիր, այլ կը ձեւափոխուի:
Անոր անհամար խորշերը, որոնք
օդէն կամ սնունդէն հաւաքուած
տարրերէ կը բաղկանան, այդ
տարրերը կ'ազատագրեն, բայց
ամենափոքր հիւլէ մը իսկ չի կոր-
սուիր: Անոնցմէ իւրաքանչիւրը
շրջավայրին ու բնութեան հա-
մեմատ նոր ձեւ մը պիտի ստա-
նայ: Կեանքի ամենազօր սկըզ-
բունքը կը վերակազմէ զանոնք
ուրիշ ձեւերով կեանք արտայայ-
տելու համար: Հոգին որ հանաւոր
ձեւերով զգեստաւորուած էր առ-
ժամապէս՝ վերջապէս կուտայ
նոյն ձեւը այդ տարրերուն, ո-
րոնցմէ խորշ առ խորշ կազմած
էր զանոնք: Հոգին ա՛լ այդ խոր-
շերէն շինուած մարմինէն ան-
կախ՝ կը թողու զայն և մարմինը
կեանքի ուրիշ ձեւով մը տեղը կը
գտնէ:

Անմահ հոգին՝ խորշածին մար-
մինէն ազատ ի՞նչ անբացատրելի
փառքով մը կը զարդարուի:

Անմահ մարմինը, զինքը որոշ
ձեւի մը մէջ կաշկանդող հոգիէն
ազատ՝ սքանչելիքի ու գեղեց-
կութեան ի՞նչ ձեւեր՝ կը հագնի:

Այս սքանչելի փոփոխութիւնը
հետեւեալ տողերով կը բացատրէ
բանաստեղծը. —

«Հինգ գրկաչափ խոր
կը պառկի բոլ հայր
Ոսկորներն անոր
Բոստեր են երկար:

Այս մարգարիտներ՝
Աչերն էին իր,
Բան չէ կորսուեր
Անկէ անյարիր:

Լոկ այս ծովն իրմէ՝
Ճոխ, բախնչելի
Բաներ շինած է.
Ոչինչ աւելի:»

ՄԱՐԿՐԻԹ ՌԻՐՈՆԸՐ ՄՈՐԼԻ

Անգլ. բնագրէն ամփոփեց
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

(Վերջ)

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքներ՝ պէտք չէ քաշել տար
ներ փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կզակի ձեւափոխութիւն յառաջ
կուգայ. Դիմեցէք Ատամնաբոյժ

ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԵՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասանմանի մէջ երկար ժամա-
նակ, փասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ ասով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ճամփի
սանդուխներուն դէմ. Թիւ 61:

Տղոց մորթային հիւանդութեանց
դարմանատուն

ՏՔԹ. Թ. Յ. ՄՁՐԿԵԱՆ ԵՆ

ՏՔԹ. Թ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Քեծ շուկայ, Դալբագճըլար, Պայագիտի
դրան դէմ, Թիւ 18:

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ԻՆՔՆԱԳԻՐ ՃԱՌ ՄԸ

(Արտասանուած Ս. Զատկի առթիւ)

Զորս տարի անշուր չարչա-
րանքներով ապրեցանք աքսորի
չարաշուք ճամբուն վրայ, որ մէկս
բեռնակիր, որ մէկս հովիւ, որ մէկս
ծառայ մեր դահիճներուն մօտ պա-
տառ մը հացի կարօտ և անխնայ
ծեծի ենթակայ:

Եւ դեռ նոր ազատուած տա-
ռապանքի այդ բովէն, ինկած
էինք մէկ մէկ անկիւն գլխիկոր,
և յուսաբեկ տխրութեամբ կը նա-
յէինք մեր բաղդին, երբ Հայ ազ-
գը տեսնելով թշնամիին ձեռքէն
ազատուած որբերու խղճալի վի-
ճակը, հաւաքեց դանոնք որբա-
նոցներու մէջ: Ահաւասիկ ես և
ամբողջ որբ ընկերներս այժմ հոս
Պէշիքթաշի նորահաստաւ որբա-
նոցին մէջ սլատուարժան խնա-
մակալութեան և ուսուցչական
կազմին գուրգուրանքին առար-
կայ ենք, որոնք կը ջանան ամէն
գնով մոռցնել սալ մեր անցեալի
տխուր յիշատակները, խնամելով
թէ մեր մարմինը և թէ մեր միտ-
քը ու մանաւանդ սա տօնական
օրերուն կ'աշխատին ուրախացնել
մեզ, մեր հայրենական զատկի
կեանքը ապրեցնելով:

Ուրեմն մենք՝ որբերս խորին
շնորհակալութիւն և երախտագի-
տութիւն կը յայտնենք մեր բա-
րերարներուն ազնուասիրտ խնա-
մակալութեան, որբանոցի անօ-
րէնութեան և ուսուցչական կազ-
մին, և ի փոխան, մեզ համար ե-
ղած այսքան նիւթական և բա-
րոյական զոհողութեանց, կը խոս-

տանանք մեր կարգապահութեամբ
բը, աշխատասիրութեամբը և մեր
ուսուցիչներու ու մեծերու հան-
դէպ ունեցած կատարեալ հնա-
զանդութեամբը տիպար օրինակ
մ'ըլլալ միւս բոլոր որբանոցնե-
րուն :

Պէշիքթաշի ազգ. որբանոցի
Գ. դասարանի աշակերտ
ՓԱՅԼԱԿ Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

11 Ապրիլ 1920

Պէշիքթաշ

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Զարեհ, Բլատեան մէկ
օրինակ «Առաւօտ» նորահասնե-
րու հանդէս կը նուիրէ Մազրի-
գիւղի որբանոցին :

Տղոց հագուստի վաճառատուն

ՄԻՂԱՆ ՄՈՍՃԵԱՆ

Եւրոպական ծեւով ճաշակաւոր, դիմաց-
կուն եւ աժան հագուստ ունենալու հա-
մար տղա՛ս, ծնողքդ առաջնորդէ Մեծ
Շուկայ, Իսկէնտէր Պօղազըի դրան ուղ-
ղութեան վրայ, Ֆէրանէնիլէր փողոց,
թիւ 1.

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԷՐԵԱՆ

Զարմաքճըլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայագիտ, Մաքասճըլար, թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՆ

ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզնէթ
Զիա դեղարանին վերնաթիւը :

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

Մեծ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻՒ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ԲԷԻՍԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, նոր նամակատան դէմ, Վլօրա
խան, թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր, զուրօններ,
պոլիչներ եւ բիվօներ :

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Ամեն Հայ պէտք է ունենայ

ՄԲՈՂԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ք Ա Ր Տ Է Ս Ը

Գունաւոր, մեծադիր, մանրամասն

ԳԻՆ 30 ԴՐՇ.

Դիմել Պապը Ալի ճատտէսի, Առա-
տուրեան տպարան, Յ. Դարբինեանի

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Գաբու: Մէյվախօշ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Ա. — ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

«Գերմանները ասկէ կ'երթան :»

Փոքրիկն ժիւլիէն, քանի մը վայրկեանի համար վերստանալով իր տղու զուարթութիւնը, — որ երկար ամիսներէ ի վեր արշաւանքի սոսկումներէն և անոր պատճառած տրամուլթենէն գրեթէ մարած էր, — սկսաւ գլխարկը նետել դէպի ձեղուն և գոչել դարձեալ :

«Օ՛խ, Գերմանները կ'երթան այստեղէն, ա՛լ բոլորովին կը հեռանան : Բարի ճանապարհ, Պր. Տիւմօլէ, բարի ճանապարհ :»

Մայր Մօրէն, որ գետնախորհածորով դալածօշ եփելու վրայ էր, առանց իսկ ետին դառնալու, անախորժ ձայնով մը ըսաւ տղուն :

«Այս տասներորդ անգամն է որ մեզ լուր կը բերես թէ Գերմանները կը հեռանան, և սակայն դարձեալ միշտ հոն են անոնք : Երբեմն անոնք կը մեկնին, առանց փող հնչեցեցելու և առանց թմբուկի, յակայն ուրիշներ կը յաջորդեն անոնց : Ասոնք, մեկնողները, կը նմանին վնասակար անասնիկներու և գէշ խոտերու, զորս բնաջնջել կը ջանան, բայց ի դուր, միշտ ուրիշ վնասարեք անասուններ երեւան կուգան և ուրիշ գէշ խոտեր կը բուսնին անոնց տեղ :»

«Ա՛լ այս անգամ վերջնական է անոնց հեռացումը, կ'երդնում,

վրայ բերաւ ժիւլիէն վազելէն շնչահատ. քաղաքէն կուգամ, ամէն բան պատրաստուած է անոնց մեկնումին համար :

Յետոյ ժիւլիէն իր յուզուած ձայնին ցած շեշտ մը տալով յարեց :

«Կ'երեւի թէ Ֆրանսացիները նոր ճակատամարտ մը շահած են : Երէկ, մինչեւ իրիկուն թընդանօթները աւերներ դործեցին : Թնդանօթին ձայնը շատ մօտէն կը լսուէր, կարծես թէ քաղաքին մէջէն կը գոռար : Ասկէ դատ Գերմանները կատաղի երեւոյթ մը ունէին : Տուներէն դուրս կը հանէին՝ ինչ որ կրնային և կը փոխադրէին զանոնք մեծ կառքերու մէջ :

«Ա՛հ, անտաարակոյս, հոս ալ կրնան գալ, պոռաց մայր Մօրէն, և եթէ փոխադրելի բան մը գտնեն՝ պիտի յափշտակեն զայն գծուծօրէն :

Արդարեւ բան մը մնացած չէր գրեթէ այն սիրուն ու փոքրիկ ագարակէն, զոր մայր Մօրէն, իր տղուն օժանդակութեամբ կ'արժեցնէր պատերազմէն առաջ իր փորձառութեամբն ու գործունէութեամբը :

Հիմա այդ տեղը, պատերազմի թատր եղած էր, հիմա քանդուած և աւերակի վերածուած էր : Նախ՝ անոր համար որ, իր

զաւակը թողլով ազարակը, առանց տրտնջալու գացած էր կատարելու իր պարտականութիւնը գիւղացիի այն յամառ կորովով, որ իր հողը կը պաշտպանէ, կըռուելով միեւնոյն ժամանակ իր երկրին համար: Եւ յետոյ Գերմանները արշաւած էին արդէն այդ հողամասը և Սէն-Պաուլի այդ սիրուն ազարակէն քարի կոյտեր միայն մնացած էին:

Մայր Մօրէն, ըլլալով կամքի և մտքի տէր կին մը, կուրծք տուած էր այդ փոթորիկին: Մայր Մօրէն չէր ուզած լքել իր ազարակը, ուր բնակած էր պզտիկ եղբորորդիներէն մէկուն, Ժիւլիէնի հետ, որ քաջ և հաստատամիտ տղայ մըն էր: Շատ պրզտիկ հասակին, Ժիւլիէնի ծունկը կոտրած և անկէ շատ որոշ կաղութիւն մը մնացած էր: Այդ բանը սակայն արդելք մը չէր օգտակար ըլլալու և ամենադժուարին աշխատութիւնները կատարելու: Նմանապէս, այդ յայտնի կաղութիւնը, ելակներ և սունկ քաղելու համար անտառները երթալու արդելք եղած չէր:

Ժիւլիէն այդ ատեն թէեւ տասը տարեկան էր, բայց այդ արիկնոջ համար, որ զայն շփացնելով մեծցուցած էր, ճշմարիտ ընկեր մըն էր, Ժիւլիէն այնքան ողջամիտ և կարեկցոտ էր: Միւս կողմէ պատերազմը զինքը թէ խոհական և թէ ծեր ըրած էր: Հակառակ այս կացութեան սակայն, Ժիւլիէն, երբեմն երբեմն ուրախ արտայայտութիւններ և իր տարիքին համար խիստ ներքին շարութիւններ կ'ունենար: Ժիւլիէն

ճիշդ այս երեւոյթը կը պարզէր՝ երբ գլխարկը դէպի ձեղուն նետելով հետեւեալ տողերով — ինչպէս ինք կ'ըսէր, — Պարոն Տիւմօլէի երգը կ'երգէր.

«Երբ Գերմանները կը հեռանա ու մենք երե ուրախ ու երջանիկ չըլլանք, երբեք երջանիկ պիտի չկրնանք ըլլալ:

Մայր Մօրէն իր քով ունէր նաեւ անձնուէր սպասուհի մը՝ դեռատի որբուհի մը՝ զոր գտած էր և որ ազարակին մէջ իրեն մեծ ծառայութիւններ կը մատուցանէր: Այդ սպասուհին հազիւ տասներէնգ տարեկան կար: Փոքրիկն Մարթա, տոկուն, գործունեայ և բոլոր դաշտային աշխատութեանց հիանալի կերպով յարմարող մըն էր: Մարթա կը խնամէր կենդանիները և կը մշակէր պարտէզները:

Բայց այժմ, այլեւս, ոչ կենդանի կար և ոչ ալ պարտէզ: Գերմանացիները, այն օրէն երբ այդ երկիրը արշաւած էին, ամէն բան վերցուցած, բան մը ձգած չէին: Գերմանները հաստատուած ալ չէին Սէն-Պաուլի այդ ազարակին մէջ, ուր, այլեւս ո'չ ուտելիք կրնային գտնել և ոչ ալ պառկելու տեղ:

Մայր Մօրէն ամփոփուած էր մասամբ անփնայ մնացած մատանի մը մէջ, և հող էր որ կը շարունակէր ապրիլ Ժիւլիէնի և Մարթայի հետ: Մայր Մօրէն մառանին քովիկը փոքր ընդհողեայ յարկի մը մէջ, փճացումէ հազիւ կրցած էր քանի մը պարկ դեանախնձոր, քիչ մը խոզի ճարպ և խոնձորօղի աղատելով պահել:



ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Մայր Մօրէն, հող, պատե-
րազմի դաշտը, անծանօթ վայր
մը, կռուող տղէն լուր առած
չըլլալով և իր ամբողջ տան կոր-
ծանութիւնն ալ հանդիսաւորաբար
ըլլալով մէկտեղ, իր բարոյ, կորովը
պահած էր և երբեք ցաւ չէր
զգար այդ վիճակին հնթարկուած
ըլլալուն համար: Իր նուիրական
սլարտականութիւնն էր մնալ իր
հողին վրայ, եթէ նոյնիսկ ար-
շաւանքի ալ հնթարկուած ըլլայ
ան, այն համոզումով որ, եթէ
անոնք, բարբարոսները, անկէ
վտարուէին, այս ազատագրումը
տօնելու համար, զոնէ ինք առա-
ջինը պիտի ըլլար դրօշակ պար-
զողներու կամ ծաղիկներ փռող-
ներու մէջէն: Ասկէ զատ մայր
Մօրէն երգում ըրած էր իր տը-
ղուն իբր զինուոր մեկնելու պա-
հուն չի լքել տունը: Եւ Սէն-
Պաուլի ազարակին աւերակի վճ-
րածութիւնը պատճառ մը չէր որ
ան իր տունը ըլլալէ դադրէր:
Այնքան սիրով կապուած էր այդ
տունին ու ազարակին: (Շար.)

ՆՈՐ ՀԱՔՈՒՄՏ. — Պզտիկներ, 250
ղրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողը-
նիդ առաջնորդեցէ՛ք Ձաքմաքճըլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վանառատունը:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 24

Կէտերու տեղ տա-
ք . . . Կ ուեր զետեղելով կաղ-
. ն . . . մել հինգ բառեր, ո-
. . . ր . . . բոնք թէ հորիզոնա-
. . . ւ . . . կան և թէ ուղղա-
կ . . . ծ ձիգ կերպով միան-
գամայն կարգացւին:

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 25

Կէտերու տեղ տառեր
. . . ծ զետեղելով կաղմել
. . . ո . . . չորս բառեր, որոնք թէ
. . . ո . . . հորիզոնական և թէ
ծ . . . ուղղաձիգ կերպով մի-
անգամայն կարգացւին:

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 26

Գտնել միավանկ բառ մը որ
նշանակէ նոր բան մը, և որուն
տառերը պակսեցնելով և ըստ
հաճոյս տեղափոխելով պարունա-
կէ՝ 1. շաղկապ մը, 2. խայթող
միջաս մը, 3. մակբայ մը, 4. կեն-
դանիի ձագ մը, 5. քոչուն մը, 6.
դերանուն մը:

ՀԱՆԵԼՈՒԿ

ԹԻԻ 27

Երկու վանկով բառ մըն եմ ես,
Բայց ըսեմ ձեզ, չկայ ինձ պէս,
Բանզի կ'ուտեմ որքան, որ տաք,
Ձի նայելով պաղը կամ տաք:
Դեռ չատ ըսեմ, պզտիկ տղայ,
Եթէ չուտեմ ու չի մարսեմ,
Հացի տեղ քեզ միայն ծեծ կայ,
Գտիր տեսեմ ուրեմն ի՞նչ եմ:

ԱՐՈՒՍԵԱԿ ՔԵՇԻՇԵԱՆ

TENTH ENGLISH LESSON

VERBS

Be (ըլլալ) բային խոնարհումը

(Շար.)

If I be — ի՞՞ք այլի = եթէ ըլլամ

If you » — ի՞՞ք ետլ այլի = եթէ ըլլաս

If he » — ի՞՞ք հի այլի = եթէ ըլլայ

If we » — ի՞՞ք ուլի այլի = եթէ ըլլանք

If you » — ի՞՞ք ետլ այլի = եթէ ըլլաք

If they » — ի՞՞ք տհէյ այլի = եթէ ըլլան

If I were — ի՞՞ք ուլի ուլըր = եթէ ըլլայի

If you » — ի՞՞ք ետլ ուլըր = եթէ ըլլայիր

If he » — ի՞՞ք հի ուլի = եթէ ըլլար

If we » — ի՞՞ք ուլի ուլըր = եթէ ըլլայինք

If you » — ի՞՞ք ետլ ուլըր = եթէ ըլլայիք

If they » — ի՞՞ք տհէյ ուլըր = եթէ ըլլային

Be = եղիր

Let us be = ըլլանք

EXERCISE

If I be a good boy my father will be very glad. If you are an idle girl your mother will be very sad. If they were content they would be happy. If we can sing a song we will get the prize. If you give me

some paper I will also give you a pen. Where is your desk. Here is my table. There are many dogs but here is a cat. This horse is a good horse. That book is a heavy book.

Հետեւեալ նախադասութիւնները անգլիերէնի թարգմանեցիք.—

Ո՞ւր է քու կատուդ: Ի՞մ շունս հոս է: Ի՞մ ուսուցիչս բարի մարդ մըն է: Եթէ քու հայրդ շատ ուշ բախ է, մայրդ ալ ուրախ պիտի ըլլայ: Ուսուցիչը և աշակերտները հոս են: Այս երկայն ծառ մըն է:

Հոս բարի մարդ մը կայ: Եղբայր մը ունի՞ս: Ո՞չ, ես երկու քոյրեր ունիմ: Հօգեղբայրդ ո՞ւր է: Եթէ ինծի դրիչ մը տաս, ես քեզի թուղթ կուտամ:

LITTLE THINGS

Little moments make an hour;
Little thoughts, a book,
Little seeds, a tree or flower:
Water-drops, a brook;
Little deeds of faith and love
Link the earth to heaven above.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (24 քիւ) 60 Դահ.

Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 ») 10 Զրամֆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.—Առաւօտի հասցէն է՝ Պապը Ալի
Ճատտէսի, Թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:

ՊԻԻՔԱՍԷՔԹԻՆ BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ
ազդու հականեխիչ եւ դարման բերնի
բորբոքումներու, ակռայի ցաւերու, լին-
տերու հիւանդութեանց եւ բերնի զար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հազերու,
ակռաները մաքրելու եւ ճերմկեցնելու:

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ CREME SARCOPTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ
երեք օրէն կատարելապէս կը բուժէ
հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Յովանիէ Ճատտէսի, Օսմ. Կեդր. Դեղա-
րանը, Թիւ 48:

ՀԱՅԿ ՄԱՀՅԱԶԱՅԵԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՅԱՆՉԵԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօք» տպրանքներ
Մահմուտ Փաշա, Քամանթօ խան, Թիւ 23

Բոլոր կարծր առարկաները մաք-
րելու եւ փայլեցնելու համար գործածէ

ՊԷՊԻՔՍ ԳԼԻՆՍԸՐ

հանրածանօթ ամբրիկեան փոշին

ՏՔԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Գարու, Համիտիէ Թիւրպէսի
դէմ: Արիկ Իւթիւժեան դեղարանի վեր-
նայարկը:

ՏՔԹ. Ա. ՍԷՍԷՐՃԵԱՆ

Գումգարու, Պատրիարքարանի կարգը
Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օր ժամը
3էն 5, Քանթարճըլար, Էվրօքիտի դե-
ղարանը:

ԵՐԿՍԵՌ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐՆԵՐ

Մարուր եւ ճաշակաւոր հագուստ ունե-
նալու համար պէտքէ անպայման դիմել
«Լատըվէզ» Ակադեմիայէն վկայեալ

Ս ԼԱ ՄՕՏ ԴԵՐՁԱԿԱՏԱՆ

Հասցէ՝ Ղալաթիա, Վօյլօտա Ճատ-
տէ, Թիւ 122, անդլ. նմիտն. մօտ:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գարու, Մաքասըլար,
Թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամա-
նած ամբրիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սկսան վաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն:
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ծեւաւոր:

Տպագր. «Առաւօտ»